ՆՈՐՈՒՅԹ ՀԱՆԳՈՒՅՅԱԼՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՄԱՆ ՕՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սամվել Մկրտչյան

Հայոց մեջ բավականին տարածված են նախնիների կամ հանգուցյալների հետ կապված հիշատակման օրերը: Անցյալում այդ գործառույթը հիմնականում կատարել են Տաղավար (Քրիստոսի ծնունդ, Զատիկ, Վարդավառ, Ս. Աստվածածնի Վերափոխում, Խաչվերաց), ինչպես նաև կրոնա-ավանդական այլ տոները (Մեծ պաս, Տրընդեզ, Համբարձում, Ծաղկազարդ և այլն):

Խորհրդային շրջանը որոշակի փոփոխություններ մտցրեց ծիսական այդ համակարգում: Ժողովրդական նախաձեռնությամբ ի հայտ եկան նոր արարողություններ, որոնք ավանդականի և նորի յուրատեսակ փոխհամակցություն էին: Այս առումով առանձնանում էին մայիսյան (մայիսի 2) և հունվարյան (հունվարի 2) հիշատակի (գերեզմանների) օրերը, որոնք, պահպանելով ավանդական ծիսահամալիրի կառուցվածքային և մասամբ նաև ժամկետային համամասնությունները, ժամանակի ընթացքում ամրապնդվեցին կենցաղում: Այդ նոր արարողությունները լրացրին այն բացը, որը մնացել էր խորհրդային փուլում արգելված, մերժված և արդյունքում մոռացված Քրիստոսի ծննդյան և Զատկի մեռելոցների հետևանքով: Նույնիսկ Զատկի գլխավոր բաղադրիչներից մեկի՝ ձվի հետ կապված ուտեստի և խաղի ավանդույթները մասամբ պահպանվեցին խորհրդային մայիսմեկյան տոնում:

Հայաստանի առանձին բնակավայրերում հունվարյան և մայիսյան այդ օրերն ունեն տարածման տարբեր արեալներ: Օրինակ, Մեղրիում գերեզմաններ գնալու ամենատարածված օրը **հունվարի 2**-ն է: Այդ օրը բոլորը գնում են գերեզմաններ, որովհետև համարում են «պապերից եկած սովորույթ»: Ընդհանրապես, **մեռելոց** հասկացությունը մեղրեցու համար խորթ է, և առավել տարածված է **գերեզմաններ գնալու օր** ան-

Հոդվածը ներկայացվել է 12.03.2019 թ., գրախոսվել է 28.04.2019 թ., ընդունվել է տպագրության 21.06.2019 է.:

վանումը: Ուշագրավ է, որ ընդհուպ 1920-ականները մեղրեցիները նշում էին ավանդական գրեթե բոլոր տոն-մեռելոցները, որոնք այսօր ունեն մասնակի տարածում[1]:

Այդ նոր արարողությունները հիմնականում տարածված են ՀՀ հյուսիսարևելյան և հարավային շրջաններում (Տավուշ, Սյունիք): Դա հաստատեցին և՛ խորհրդային շրջանում և թե՛ 21-րդ դարասկզբին անցկացված հետազոտությունները:

Այդ սովորույթն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է հանգուցյալներին առնչվող ավանդական ծեսերի ու մասնավորապես Քրիստոսի Ծննդյան և Զատկի մեռելոցների անկմամբ: Պատահական չէ, որ խորհրդային վերջին փուլում Զատիկ նշողներն Իջևանի և Սիսիանի գյուղական բնակավայրերում կազմում էին համապատասխանաբար 19% և 13%, այն դեպքում, երբ մայիսյան գերեզմանօրհնեքն ուներ բացարձակ տարածում: Տավուշում 2008-ին այն նշել է բնակչության 47%-ը: Սակայն այստեղ առավել կենցաղավարում է հունվարյան արարողությունը (75,6%):

Հետխորհրդային շրջանում նկատվում էր հիշատակման օրերի մասնակի անկում, որը պայմանավորված էր կենցաղում հայոց ավանդական տաղավար տոն-մեռելոցների վերարթնացմամբ: Տավուշի տվյալները հնարավորություն են տալիս ընդհանրական պատկերացում կազմելու այդ փոփոխությունների միտումների վերաբերյալ: Գյուղերում, եթե Քրիստոսի ծնունդն ու Զատիկն իրենց մեռելոցներով հանդերձ 1980 թ. նշում էին 1%-ը և 13%-ը, ապա 2007-ին այն կազմում էր համապատասխանաբար 18,3% և 60,6%[2] (տե՛ս աղյուսակներ 1 և 2):

Գրեթե նույն պատկերն էր նաև Իջևան քաղաքում, ուր 1980-ին Քրիստոսի ծնունդը և Զատիկը նշողները կազմում էին 4,2% և 37%, իսկ 2008-ին՝ 51,2% և 82,3%[3]:

---

[1] **Ս. Մկրտչյան,** Մշակութային տուրիզմի խթանման հեռանկարները Մեղրիում (ձեռ.), «Հայաստան» համահայկական հիմնադրամ, Երևան, 2002, էջ 62: Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 220-221:

[2] **Ս. Մկրտչյան,** Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 221-222:

[3] **Ս. Մկրտչյան,** էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, Տավուշի մարզ, Իջևան, 2008 թ.:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Տաղավար տոների տարածվածության համեմատական պատկերը Տավուշի գյուղական բնակչության շրջանում %

ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ	1980 թ.	2007 թ.
Քրիստոսի ծնունդ	1,0	18,3
Զատիկ	13,0	60,6
Վարդավառ	75,0	97,1
Ս. Աստվածածին	6,0	1,0
Խաչվերաց	9,0	14,4

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Տաղավար տոների տարածվածության համեմատական պատկերը իջևանցիների շրջանում %

ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ	1980 թ.	1993 թ.
Քրիստոսի ծնունդ	4,2	12,5
Զատիկ	37,0	38,0
Վարդավառ	79,9	80,0
Ս. Աստվածածին	3,6	2,0
Խաչվերաց	3,2	0,0

Կապանում ևս խորհրդային վերջին փուլում այդ արարողություններն ունեին գրեթե բացարձակ տարածում, սակայն 21-րդ դարասկզբին նկատվում է դրանց մասնակի անկում. 2009 թ. տվյալներով հունվարի 2-ը նշում էր 58,9%-ը, իսկ մայիսի 2-ը՝ 34,8%-ը: Այստեղ էլ որոշակի դեր ուներ ավանդական տոն-մեռելոցի *վերադարձի* գործոնը: Եթե Քրիստոսի ծնունդ և Զատիկ նշողները 1980 թ. 7% և 1,5% էր, ապա 2009 թ. այն արդեն կազմում էր 77,8% և 84,8%[1], որն առավելապես ուներ արժեքային բնույթ:

[1] **Ս. Մկրտչյան,** ՀՀ Սյունիքի մարզ, Կապան, 2009 թ.: Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 222:

Հունվարյան և մայիսյան հիշատակման օրերը պայմանավորված էին նաև Ամանորի (հունվարի 1), ինչպես նաև Աշխատավորների (մայիսի 1) տոների հանգստյան աշխատանքային կարգավիճակով: Խորհրդային տոնացույցով նման կարգավիճակ ստացած մայիսյան այս ծեսը ժամկետի առումով ընդգրկում էր նաև մայիսի 2-ը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ շատ բնակավայրերում (այդ թվում՝ Երևանում) մայիսյան այդ օրը վերածվեց նաև խնջույքների («մայովկաների»), որոնք կազմակերպվում էին զբոսայգիներում, անտառներում և պուրակներում: Ինչ վերաբերում է մասնակիցների սոցիալական կազմին, ապա դրանք ընկերային և ընտանեկան-ազգակցական խմբեր էին[1]:

Հանգուցյալների հիշատակման հին և նոր սովորույթների ժամկետային ու կառուցվածքային համապատասխանության տեսակետից ուշագրավ է նաև խորհրդային շրջանում Սիսիանում արձանագրված երևույթը, երբ գերեզմանօրհնեքի կարգավիճակ էր ստացել խորհրդային ևս մեկ գլխավոր տոն՝ Հոկտեմբերյան հեղափոխության օրը (նոյեմբերի 7), որի հաջորդ օրը (նոյեմբերի 8) գերեզմանների օր էր[2]:

Այս արարողությունների համատեքստում դիտարկվել է նաև Զատկի ձվի «գույնի փոփոխությունը», ինչպես նորաստեղծ սովորույթի, այնպես էլ ավանդական Զատկի և մայիսմեկյան տոնի խաչաձևման տեսանկյուններից: Այն ընտանիքներում, ուր մահվան նոր դեպքեր կային, որպես սգո խորհրդանիշ ձուն սև էին ներկում[3], որը եզակի երևույթ էր: Հետագայում սուգն արտացոլվեց ձուն չներկելով կամ բնական գույնի թողնելով, որը ժողովրդական ստեղծագործության հետևանք է: Հայոց եկեղեցական օրենքով մահացածների կապակցությամբ ձուն սև ներկելու կանոն գոյություն չունի: Այն ժողովրդական սովորույթ էր, որը նույնիսկ ավանդական կենցաղում մեծ տարածում չուներ: Ուշագրավ է, որ հետագայում, սկսած խորհրդային շրջանից առ այսօր, մահացածների կամ նախնիների նկատմամբ հարգանքի դրսևորումն արտահայտվում է ընդ-

---

[1] **Ս. Մկրտչյան,** ԴԱՆ, Երևան, 1995: Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 222:

[2] **Ս. Մկրտչյան,** Տոները հայոց արդի կենցաղում (էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն), ՀԱԲ (Հայ ազգագրություն և բանահյուսություն), N 22, Երևան, 2007, էջ 184-185: Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 222:

[3] **Ե. Լալայեան,** Զանգեզուր, ԱՀ (Ազգագրական հանդես), Գիրք Դ, N 2, Թիֆլիս, 1998, էջ 111-112:

հանրապես ձու չներկելով: Հետաքրքիր երևույթ էր խորհրդային շրջանում ի հայտ եկած մայիսյան (մայիսի 2) նոր մեռելոցը, որն իր «մայիսմեկյան նախատոնակով» որոշակիորեն կրում է մոռացված և մերժված զատկական տոն-մեռելոցի ավանդույթի յուրատեսակ ժառանգորդություն, երբ, որպես մահացած մերձավորների նկատմամբ հարգանքի խորհրդանիշ, ձուն սև էին ներկում[1]:

Հայոց եկեղեցին այսօր առանցքային նշանակություն ունի ավանդական տոների վերականգնման գործում: Եթե չկան գործող եկեղեցիներ, ապա սակավ են նաև կրոնա-ավանդական տոների և ծեսերի մասնակիցները: Այս օրինաչափությունը շատ բնութագրական է Մեղրու օրինակով, ուր 21-րդ դարասկզբին չկար որևէ եկեղեցական կամ հոգևոր ծառայող: Չնայած այն հանգամանքին, որ մեղրեցիներն ունեին առավել աշխարհիկ վարքագիծ, այդուհանդերձ, այդ խնդիրը նրանց շատ էր հուզում. «Հիմա Մեղրու եկեղեցիները տերտեր չունեն,- նշում է բանասացը,- ոնց որ անտեր ենք մնացել: Մի ժամանակ, մեկ տարի առաջ, երբ տերտեր ունեինք, շատ արարողություններ (կնունք, հարսանիք և այլն) էին կատարվում եկեղեցում: Ամենացավոտ երևույթներից է, որ այսօր քահանա չունենք: Առաջ ունեինք (Տեր Գրիգորը), սակայն հիմա նա չկա: ... Տերտերը որ եկավ, Մեղրիում շատ աշխուժացան եկեղեցական ծեսերը»[2]:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ կրոնա-ավանդական տոնների մեռելոցներին Երևանի «Թոխմախ» գերեզմանատուն այցելում են առաջին հերթին Խաչվերացին ու Զատկին, որոնց նկատելիորեն զիջում են Քրիստոսի ծննդյան, Վարդավառի և Ս. Աստվածածնի Վերափոխման մեռելոցները: Նույնը վերաբերում է նաև Համբարձմանը, ուր ևս գերեզման գնալու հաճախականությունը շատ ցածր էր[3]:

Տվյալ գործառույթը ներկայում էլ պահպանում են ավանդական և հատկապես՝ տաղավար տոների մեռելոցները, ուր դարձյալ առանձնանում են Խաչվերացը, Զատիկը և մասամբ՝ Քրիստոսի ծնունդը, որը նաև

---

[1] **Ս. Մկրտչյան,** ԴԱՆ, Տավուշ (Դիտավան), 2007-2008 թթ.: **Ս. Վարդանյան,** ԴԱՆ, ՀՀ, ք. Արմավիր, 2007 թ. Շահումյանի Ղարաչինար գյուղից բռնագաղթածներ: **Ս. Մկրտչյան,** Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 218-223:

[2] **Ս. Մկրտչյան,** Մշակութային տուրիզմի խթանման հեռանկարները Մեղրիում, էջ 61: Հայոց տոնածիսական մշակույթ, էջ 223:

[3] **Ս. Մկրտչյան,** ԴԱՆ, Երևան, 1995: Տոները հայոց արդի կենցաղում, էջ 184:

պայմանավորված է այդ օրերի ոչ-աշխատանքային կարգավիճակով:

ՆՈՐՈՒՅԹ ՀԱՆԳՈՒՅՅԱԼՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՄԱՆ ՕՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սամվել Մկրտչյան

Բանալի բառեր *- Տոն, սովորույթ, նախնի, հիշատակ, մեռելոց, հանգուցյալ, եկեղեցի, գերեզման, հունվարյան, մայիսյան*

Հայոց մեջ տարածված են նախնիների կամ հանգուցյալների հետ կապված հիշատակման օրերը: Անցյալում այդ գործառույթը հիմնականում կատարել են եկեղեցական տոները, որոնցից մասնավորապես առանձնանում էին տաղավար տոները:

Խորհրդային շրջանում այս առումով որոշակի փոփոխություններ կատարվեցին հայոց ծիսական համալիրում: Ժողովրդական նախաձեռնությամբ ի հայտ եկան նոր արարողություններ, որոնք ավանդականի և նորի յուրատեսակ փոխհամակցություն էին: Այս առումով առանձնանում էին մայիսյան (մայիսի 2) և հունվարյան (հունվարի 2) հիշատակի (գերեզմանների) օրերը, որոնք, պահպանելով ավանդական ծիսահամալիրի կառուցվածքային և մասամբ նաև ժամկետային համամասնությունները, ժամանակի ընթացքում ամրապնդվեցին կենցաղում: Այդ արարողությունները, ըստ էության, լրացրին այն բացը, որը մնացել էր խորհրդային շրջանում արգելված, մերժված և արդյունքում մոռացված Քրիստոսի ծննդյան և Զատկի մեռելոցների հետևանքով:

НОВИЗНА В КОНТЕКСТЕ ДНЕЙ ПОМИНОВЕНИЯ УСОПШИХ

Самвел Мкртчян

Ключевые слова *- Праздник, традиция, предки, поминовение, усопшие, церковь, могила, январский, майский.*

Среди армян распространены дни, связанные с поминовением предков или усопших. В прошлом эту функцию выполняли церковные, и, в особенности, Господские праздники. В советский период в армянском ритуальном комплексе относительно этой сферы произошли определенные изменения. В народной среде возникали новые обряды, которые были своеобразным сочетанием традиционного и нового. В этом смысле майские (2 мая) и январские (2 января) праздники стояли особняком, которые, сохраняя соотношения структур и, частично, праздничных календарных циклов, в течение времени укрепились в быту. Эти обряды, фактически, восполнили

пробелы, образованные в результате запрещенных и отвергнутых, и, следовательно, забытых дней поминовения усопших в праздниках Рождества Христова и Пасхи.

THE NOVELTY IN THE CONTEXT OF THE REMEMBRANCE OF THE DEAD

Samvel Mkrtchyan

Key words: *Holiday, habit, ancestor, remembrance, the remembrance of the dead, deceased, church, cemetery, January, May*

The days of remembrance of the dead or ancestral commemoration are common among the Armenians. In the past, this function was mainly regulated by church feasts, especially the Cardinal Feasts of the Armenian Apostolic Church (Taghavar). In this context some changes were made in the Armenian ritual complex during Soviet period. New ceremonies arose on the popular initiative, that were a peculiar combination of the traditional and the new. The May (May 2nd) and January (Jan 2nd) remembrance days that have been strengthened in everyday life of people, by preserving the structural and term (partially) proportions of traditional ritual complex are distinguished in this context. These ceremonies, in fact, filled the gaps formed as a result of the forbidden and rejected, and, therefore, forgotten Feasts of Christmas and Easter.